

**ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԵՐԱՌՈՂ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ
 ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ**







ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ

Բաց Բաժնետիրական Ընկերություն


**ՀՀ, ք. Երևան, Պուշկինի 19, հեռ. 54-78-95, ֆաքս 54-78-94, էլ. փոստ araratbank@araratbank.am
 Հաշվետվություն թիվ 58, 29.11.2012թ.**


տեղաբաշխված արժեթղթերի դասը՝	բաժնետոմս,	պարտատոմս	պարտատոմս
արժեթղթերի քանակը՝	1,192,401 հատ,	25,000 հատ	40.000 հատ
արժեթղթերի անվանական արժեքը (արժույթը)՝	5,000 ՀՀ դրամ,	10,000 ՀՀ դրամ	25 ԱՄՆ դոլար

“Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ հաշվետվությունում ներառվող տեղեկությունները ճշգրիտ և ստույգ են և չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել փաստաթղթի ամբողջականությունը”:

Ստորագրող անձինք՝	Վարչության անդամ, Միջազգային գործառնությունների և թղթակցային հարաբերությունների վարչության պետ		
Ջարուհի Մելքոնյան (անուն, ազգանուն)	(պաշտոն)	 (ստորագրություն)	<u>29.11.12</u> (ամսաթիվ)
Արա Ախոյան (անուն, ազգանուն)	Վարչության անդամ, Ռազմավարության և բիզնեսի զարգացման վարչության պետ (պաշտոն)	 (ստորագրություն)	<u>29.11.12</u> (ամսաթիվ)
Սուրեն Կարապետյան (անուն, ազգանուն)	Վարչության անդամ, Տարածքային ստորաբաժանումների գործունեության կոորդինացման բաժնի պետ (պաշտոն)	 (ստորագրություն)	<u>29.11.12</u> (ամսաթիվ)
Տիգրան Գալստյան (անուն, ազգանուն)	Վարչության անդամ, Գլխավոր հաշվապահ (պաշտոն)	 (ստորագրություն)	<u>29.11.12</u> (ամսաթիվ)
Նշան Գրիգորյան (անուն, ազգանուն)	Վարչության անդամ, Գործադիր տնօրենի տեղակալ (պաշտոն)	 (ստորագրություն)	<u>29.11.12</u> (ամսաթիվ)
Դավիթ Հարությունյան (անուն, ազգանուն)	Վարչության անդամ, Գործադիր տնօրենի տեղակալ (պաշտոն)	 (ստորագրություն)	<u>29.11.12</u> (ամսաթիվ)

Ստորագրությունները հավաստում են՝

Աշոտ Օսիպյան (անուն, ազգանուն)	Վարչության նախագահի Գործադիր տնօրեն (պաշտոն)	 (ստորագրություն)	<u>29.11.12</u> (ամսաթիվ)
--	---	--	------------------------------



29 նոյեմբերի 2012 թ.

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաժնետոմսերի տեղաբաշխման արդյունքները հաստատելու և կանոնադրության մեջ փոփոխություն կատարելու մասին ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաժնետերերի արտահերթ հեռակա ընդհանուր ժողովի 2012 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 02/1L որոշում (որոշումը կցվում է:)

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ տնօրինություն

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ



Հասցե՝ 0010, Գ. ք. երևան, Պուշկինի 19 հեռ.՝ (+37410) 54-78-95 Ֆաքս՝ (+37410) 54-78-94 էլ.փոստ՝ araratbank@araratbank.am
ք.երևան «27» նոյեմբերի 2012թ.

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՀԵՌԱԿԱ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 02/1L

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի Հոդված 23-ի 1-ին մասը, «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի Հոդված 21¹-ի 2-րդ մասի ա) և գ) կետերը, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի Հոդված 67-ի 1-ին մասի ա), գ) և է) կետերը, ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ (այսուհետ՝ Բանկ) կանոնադրության 10.2 կետի ա), գ) և ժ) ենթակետերը՝ Բանկի բաժնետերերի արտահերթ հրավիրված ընդհանուր ժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց .

1. Հաստատել 2012 թվականի հոկտեմբերի 08-ից 12-ն ընկած ժամանակահատվածում ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ կողմից լրացուցիչ թողարկված 85,100 (ութսունհինգ հազար մեկ հարյուր) հատ հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսերի տեղաբաշխման արդյունքներն առ այն, որ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաժնետերերից Վերակառուցման և Զարգացման Եվրոպական բանկի կողմից ձեռք է բերվել 21,275 (քսանմեկ հազար երկու հարյուր յոթանասունհինգ) հատ հասարակ (սովորական) անվանական բաժնետոմս, որոնցից յուրաքանչյուրի համար վճարվել է 11,750 (տասնմեկ հազար յոթ հարյուր հիսուն) ՀՀ դրամ, իսկ ՖԼԵՇ ՍՊԸ և ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ մյուս բաժնետերերի կողմից ձեռքբերման նախապատվության իրավունքից չօգտվելու և բաժնետոմսերի ձեռք չբերման արդյունքում RURAL IMPULSE FUND II S.A., SICAV-SIF հիմնադրամի կողմից ձեռք է բերվել 63,825 (վաթսուներեք հազար ութ հարյուր քսանհինգ) հատ հասարակ (սովորական) անվանական բաժնետոմս, որոնցից յուրաքանչյուրի համար վճարվել է 14,687 (տասնչորս հազար վեց հարյուր ութսունյոթ) ՀՀ դրամ:

2. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ կանոնադրության 4.1 կետը փոփոխել՝ շարադրելով հետևյալ բովանդակությամբ.

«4.1. Բանկի կանոնադրական կապիտալը կազմում է 6,387,505,000 (վեց միլիարդ երեք հարյուր ութսունյոթ միլիոն հինգ հարյուր հինգ հազար) ՀՀ դրամ, որը կազմված է

1,277,501 (մեկ միլիոն երկու հարյուր յոթանասունյոթ հազար հինգ հարյուր մեկ) հատ հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսից՝ յուրաքանչյուրը 5000 (հինգ հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով:

Բանկի հայտարարված հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափը սահմանված է 2,000,000 (երկու միլիոն) հատ բաժնետոմս:»:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ժողովի նախագահ՝

Բ. Բեգլարյան

Իսկականի հետ ճիշտ է
Աշխատակազմի ղեկավար՝



Մ.Ուզունյան